Հրաչյա Արզումանյան

Ազգային անվտանգությունը և ազգային հզորությունը
Ընդհանուր հասկացություններ և զարգացման միտումներ

Գլոբալացման գործընթացները փոխում են անվտանգության աշխարհաքաղաքական լանդշաֆտը և միջազգային միջավայրը՝ ժողովուրդներին ու երկրներին հարկադրելով արձագանքել նոր սպառնալիքներին և մարտահրավերներին: 21-րդ դարի աշխարհը որակապես փոխվել ու ավելի բարդ է դարձել, ի հայտ են եկել բազմաթիվ ասիմետրիկ սպառնալիքներ, որոնց դիմակայելն ինդուստրիալ դարաշրջանի ինստիտուտների և հայեցակարգերի հիմքի վրա լավագույն դեպքում դառնում է անարդյունավետ, իսկ ավելի հաճախ՝ պարզապես անհնարին:

Ներկայում ձևավորվում է պատերազմի և խաղաղության, ազգային և միջազգային անվտանգության, դրանց ապահովման ուղիների, եղանակների և միջոցների նոր տեսլական, ինչն ուղեկցվում է ընդհանրապես «անվտանգություն» և մասնավորապես «ազգային անվտանգություն» հասկացությունների խորացմամբ և ճշգրտմամբ: Ինտենսիվ որոնումներ և հետազոտություններ են կատարվում, որոնց նպատակն է բացահայտել ազգային անվտանգության տեսական հիմնախնդիրները, մշակել դրա գործնական ապահովման առավել օպտիմալ և արդյունավետ միջոցները: Արդեն ակնհայտ է, որ.

- **ազգային անվտանգության հիմնախնդիրները չեն սահմանափակվում ռազմական ոլորտով, այլ ընդգրկում են հասարակության կյանքի տառացիորեն բոլոր կողմերը,**
- **բազմազան և բազմաբնույթ փոխադարձ կապեր գոյություն ունեն հասարակության, պետության և արտաքին աշխարհի միջև, որոնք բազմաթիվ վտանգներ և սպառնալիքներ են ծնում,**
- **ազգային անվտանգության ապահովման համար հարկավոր է մշակել տեսական գիտելիքների մի ամբողջ համակարգ, ստեղծել իրավական բազա, համապատասխան կազմակերպություններ և հաստատություններ, որոնք կտնօրինեն անհրաժեշտ միջոցների՝ ազգային անվտանգության ապահովման տեսական և գործնական հիմնախնդիրների լուծման համար,**
- **վերոնշյալ գործընթացների ծավալումը տեղի է ունենում համաշխարհային հանրությունն ընդգրկած որակական փոփոխությունների ֆոնին, որը հայտնի է որպես գլոբալացման գործընթաց:**

Յուրաքանչյուր մասնագետ, ով աշխատում է այս կամ այն ոլորտի անվտանգության ապահովման հիմնախնդիրների վրա, եթե ուզում է արդյունավետ աշխատել իր ոլորտում, պետք է հստակ պատկերացնի ազգային անվտանգության ողջ համակարգը, նրա կառուցվածքը, այն մարմինների տեղն այդ կառուցվածքում, որտեղ աշխատում են, ինչպես նաև իր գործունեության ոլորտում առաջ եկող վտանգների փոխկապվածությունն ու փոխազդեցությունը, այլ ոլորտներում և ընդհանրապես հասարակությունում առաջ եկող վտանգները:

Նոր դարաշրջանի մարտահրավերներին համարժեք արձագանքների ձևավորման համար հասարակությունը, պետությունը և նրա ԱԱ ոլորտը հարկադրված են փոխվել. Հայաստանի ԱԱ ոլորտի փոխակերպումը վերածվում է սուր անհրաժեշտության: